

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

### 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 1. Հաշվետու ընկերությունը

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) գրանցված ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի կառավարում իրականացնող առաջին ընկերությունն է: Ընկերության հիմնադրման ամսաթիվն է՝ 2012 թ. հոկտեմբերի 18-ը. այն գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ՝ ստանալով թիվ 1 լիցենզիան: Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Խորենացու 15, 5-րդ գրասենյակ:

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է պրն. Տիգրան Կարապետյանի վերջնական վերահսկողության տակ գտնվող «Կապիտալ Ինվեսթմենթս» ՓԲԸ դուստր ընկերություն:

Ընկերությունը կառավարում է է հետևյալ բաց կամավոր կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերը՝

- ԿԱՄ պետական արժեթղթերի ներդրումային ֆոնդ
- ԿԱՄավոր 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ
- ԿԱՄավոր 2 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ
- ԿԱՄ Բրիդջ Ֆոնդ I
- ԿԱՄ Բրիդջ Ֆոնդ II

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 6 աշխատակից (2017 թ. դեկտեմբերի 31՝ 6):

#### Գործարար միջավայրը

Կարգավորող մարմինները վերահսկում են Ընկերության գործունեության տարաբնույթ ոլորտները, և կարող են իրականացնել ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Այս օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության տարբեր ասպարեզները, ներառյալ՝ վաճառքի և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառնությունները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, շարունակական մասնագիտական վերապատրաստումը, փողերի լվացման կանխարգելման գործունեությունը, հաճախորդի ճանաչման քաղաքականությունը, հաշվետվությունների և հաշվառման վարումը, ինչպես նաև տնօրենների, ղեկավար և շարքային աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

#### Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ-ում, հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, կարող է լրացուցիչ բարդություններ ստեղծել Հայաստանում գործող ընկերությունների համար:

Ընկերության ակտիվները հիմնված են ՀՀ-ում: Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթարկվում զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրների շուկաները: Ինչպես դիտվել է նախկինում, փաստացի կամ թվային ֆինանսական խնդիրները կամ զարգացող տնտեսությամբ երկրներում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը կարող են բացասական ազդեցություն

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

ունենալ Հայաստանի ներդրումային միջավայրի, և նրա տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Ընկերության ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, արժեթղթերի շուկայում, կանոնակարգային դաշտում և աշխարհաքաղաքական այլ փոփոխությունները, որոնք բոլորն էլ դեր ունեն ակտիվների գնահատման, թրեյդինգային գործունեության, տոկոսադրույքների, ներդրողների ընդհանուր տրամադրվածության նկատմամբ, և դուրս են Ընկերության վերահսկողությունից: Վարկային շուկաների իրադրության վատթարացումը, կարճաժամկետ տոկոսադրույքների և արժեթղթերի գնահատումներում նվազումները բացասական ազդեցություն ունեն Ընկերության սեփական կապիտալի վրա:

Երկրի ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղության վրա իրավական, կանոնակարգման և քաղաքական զարգացման հետ միասին զգալիորեն ազդում են կառավարության կողմից ընդունված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները: Ղեկավարությունը հնարավորություն չունի կանխատեսել բոլոր զարգացումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական ոլորտի և տնտեսության վրա, ընդհանուր առմամբ, և, հետևաբար, չի կարող կանխատեսել այն ազդեցությունը, որն այդ փոփոխությունները կարող են ունենալ Ընկերության զուտ ակտիվների արժեքի վրա: Ղեկավարության համոզմամբ, իրենց կողմից ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցառումներն Ընկերության կայունությունն ու զարգացումն ապահովելու ուղղությամբ: Կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ընթացիկ գործառնական և բիզնես միջավայրի ազդեցությունը Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատումներից:

Որպես ներդրումների կառավարիչ, Ընկերությունը ենթակա է նաև կարգավորման պահանջների, որոնք վերաբերում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պարտավորություններին, կառավարման վճարներին, համապատասխանության արդյունավետ ծրագրերի իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, գովազդման, կառավարչի և հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայտման, ինչպես նաև կեղծիքից պաշտպանվածության ընդհանուր դրույթներին:

Ֆինանսական կազմակերպությունները, որպես կանոն, պետք է ներդնեն փողերի լվացման կանխարգելման քաղաքականություններ, իրականացնեն աշխատակիցների հատուկ վերապատրաստման դասընթացներ, նշանակեն փողերի լվացման կանխարգելման համար պատասխանատու աշխատակցի: Ավելին, տվյալների գաղտնիության և պաշտպանության ոլորտում կանոնակարգային գործառույթները ողջ աշխարհում շարունակաբար զարգանում են, և պայմանավորված են հիմնականում տեխնոլոգիաների զարգացմամբ, և որպես արդյունք՝ տեղեկատվության արագ տարածման հնարավորություններով: Ընկերության հանդեպ կիրառելիության շրջանակներում պետք է ապահովվի համապատասխանություն այդ կանոնակարգային պահանջների հետ:

Ղեկավարության կողմից սահմանվել են քաղաքականություններ և ընթացակարգեր՝ այդ կանոնակարգերի հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

### Ֆոնդի կառավարումը

Ընկերությունը ղեկավարում և իրականացնում է ֆոնդերում պահվող փայերի վարչարարությունը: Այդ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները չեն ներառվել սույն ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը վերահսկում է տվյալ կառույցը և համախմբման նկատառումները կիրառելի են դառնում՝ համաձայն հաշվետվությունների ներկայացման համապատասխան ստանդարտի պահանջների:

### Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Ընկերությունը ստեղծվել է 2012 թ. և նրա հիմնական նպատակն իր կողմից կառավարվող ֆոնդերի միջոցների կառավարման իրականացումն է: Սակայն կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի ոլորտները դեռևս նոր են Հայաստանում, բավականին դժվար է հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացնել ֆոնդերի գործիքների վերաբերյալ և շուկա հանել դրանք: 2014 թվականի ընթացքում օրենսդրական փոփոխությունների և գործատուների ու կենսաթոշակային պլանների մասնակիցների կողմից կենսաթոշակային ֆոնդերին հատկացումներ անելու պատրաստակամության բացակայության արդյունքում Ընկերությանն իր կառավարման ներքո գտնվող ֆոնդերի ակտիվների նախատեսված ավելացում կատարել դեռևս չի հաջողվել: Այս հանգամանքը և Ընկերության համար կապիտալի համապատասխան նվազագույն մակարդակի ապահովման պահանջը հանգեցրել է մայր ընկերության ֆինանսական աջակցությունից (ինչպես նաև անհրաժեշտության դեպքում) Ընկերության կախվածությանը: Չնայած Ընկերության կառավարման ներքո գտնվող ակտիվների փոքր ծավալին և վերջին ժամանակներս Հայաստանի ֆինանսական շուկայի զգալի կրճատմանը, ֆոնդերի ընդհանուր ակտիվները և զուտ ակտիվների արժեքներն աճի միտում ունեն, և 2016 թվականին եկամուտներ են ունեցել: Ընկերությունը ներդնում է հասարակության հետ կապերի և կրթական նոր ծրագրեր՝ շահառուների շրջանում իրազեկվածության մեծացման և իր կողմից կառավարվող ֆոնդերի չափը մեծացնելու ուղղությամբ: Ընկերության բաժնետերերը, իրենց հերթին, հավատարիմ են մնում Ընկերության հանդեպ ցուցաբերվող օժանդակության մոտեցմանը՝ ուղղված Ընկերության շահույթի ապահովմանը, ֆոնդերի կառավարման ասպարեզում լրացուցիչ պրոդուկտների և ծառայությունների հնարավորության դիտարկման և, ըստ անհրաժեշտության, ֆինանսական օժանդակության միջոցով: Արդյունքում, ըստ ղեկավարության հայտարարության, գործունեության անընդհատության սկզբունքը պատշաճ է սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

## 2. Պատրաստման հիմունքները

### ա. Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

### բ. Պատրաստման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշակի ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով:

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում մուտքային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Ընկերությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի մուտքային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող մուտքային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի մուտքային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի մուտքային տվյալները:

Ընկերությունն իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է ՀՀ օրենսդրության համաձայն: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական գրառումների հիման վրա և ճշգրտվել են՝ ՖՀՄՍ համապատասխանություն ապահովելու համար:

Ընկերությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ծանոթագրություն 5-ում:

### գ. Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): Հայաստանի Հանրապետությունում գործող և Ընկերության գործառնական արժույթը ՀՀ դրամն է: Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

### դ. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

### ե. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել է մի շարք գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների, ինչպես նաև հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Ղեկավարությունը գնահատումներից բացի, նաև որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում: Դատողությունները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են իրական արժեքի գործիքներին: Իրական արժեքի լավագույն վկայություն է հանդիսանում դրա գինը ակտիվ շուկայում: Շուկայում գնի բացակայության դեպքում Ընկերությունն օգտագործում է այլ գնահատման տեխնիկաներ, մասնավորապես՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին շուկաներում համանման գործիքների հետ համեմատության մեթոդը:

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Իրական արժեքի չափումները ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

### 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական հիմնադրույթներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, ներկայացման և հաշվարկի մեթոդներ, որոնք կիրառվել են ընթացիկ տարում և Ընկերության 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:

#### ա. Արտարժույթ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

#### բ. Տոկոս

Տոկոսային եկամուտը և ծախսը, ներառյալ վնասի միջոցով իրական արժեքով շահույթի չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի որոշ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ղեկավարությունն արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքների բոլոր պայմանագրային պայմանները, բայց ոչ ապագա պարտքային կորուստները: Ստացված կամ ստացվելիք տոկոսները, վճարված կամ վճարվելիք տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

#### գ. Ակտիվների կառավարման գործունեություն և կոմիսիոն եկամուտ

Կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն՝ ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումային ֆոնդերի հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:

Ակտիվների կառավարման և վարչարարության վճարները վերաբերում են ֆիդուցիար գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ և մատուցում է

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

ակտիվների վրա հիմնված այլ ֆինանսական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ֆոնդում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Ընկերության կառավարման և պահառության ներքո գտնվող ակտիվները չեն հանդիսանում Ընկերության ակտիվներ և համապատասխանաբար՝ չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի ենթարկվում նման տեղաբաշխման հետ կապված որևէ վարկային ռիսկի, քանի որ այն չի երաշխավորում այդ ներդրումները:

### դ. Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները, արտաժողովի փոխարժեքային տարբերությունները, սակայն չի ներառում տոկոսների և շահաբաժինների տեսքով եկամուտը:

### ե. Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարումից հետո:

### զ. Ընկերությունը որպես վարձակալ

Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

### է. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունները չափվում են չզեղչված հիմունքով և ծախսագրվում համապատասխան ծառայության տրամադրման դեպքում: Պարտավորությունը ճանաչվում է կարճաժամկետ դրամային պարգևավճարի տեսքով վճարվելիք գումարի գծով, եթե Ընկերությունն ունի աշխատակցին նախկինում մատուցված ծառայության դիմաց այդ գումարը վճարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն և պարտավորությունը հնարավոր է արժանահավատորեն չափել:

### ը. Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

**Ընթացիկ հարկ.** ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

**Հետաձգված հարկ.** հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել, կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

**Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր.** ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Երբ ընթացիկ կամ հետաձգված հարկն առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սկզբնական հաշվապահական հաշվառումից, հարկային ազդեցությունը ներառվում է ձեռնարկատիրական գործունեության միավորման հաշվապահական հաշվառման նպատակներով:

**Գործունեության հետ կապված հարկեր.** ՀՀ-ում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Ընկերություն գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են շահույթի ու վնասի և այլ համապարփակ եկամտի մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

### թ. Ֆինանսական գործիքներ

**ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ ստանդարտի սկզբնական կիրառման ազդեցությունը.** Ընթացիկ տարում Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 9. *Ֆինանսական գործիքներ* ստանդարտը (վերանայված 2014 թ. հուլիսին) և այլ ՖՀՄՍ ստանդարտների համապատասխան հետագա փոփոխությունները, որոնք գործում են 2018 թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 9-ի անցումային դրույթները Ընկերությանը թույլատրում են չիրականացնել համեմատականների վերահաշվարկ:

Համապատասխան տեղեկատվության մատով վերահաշվարկ չի իրականացվել, քանի որ անցումային դրույթները կիրառվում են հետադարձ հիմունքներով, ինչը հնարավորություն է տալիս տարբերությունները ճանաչել չբաշխված շահույթում ժամականաշրջանի սկզբի դրությամբ: Ինչպես նաև, Ընկերությունը ընդունել է ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ – Բացահայտումներ ստանդարտի փոփոխությունները, որոնք կիրառվել են 2018 թ. բացահայտումների

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

մասով:

ՖՀՄՍ 9 ներկայացնում է նոր պահանջներ՝

1. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման մասով,
2. Ֆինանսական ակտիվների արժեզրկման մասով, և
3. Հեջավորման ընդհանուր հաշվառման մասով:

**Տոկոսային եկամուտների և ծախսերի ճանաչումը.** Ֆինանսական գործիքների մասով տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են «զուտ տոկոսային եկամուտում» որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն գեղջում է ֆինանսական գործիքների ապագա գնահատված դրամական հոսքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների զուտ հաշվեկշռային արժեքին: Ապագա դրամական հոսքերը գնահատվում են՝ հիմք ընդունելով գործիքի բոլոր պայմանագրային պայմանները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է բոլոր ապագա վճարման կամ ստացման ենթակա գումարները և միջնորդավճարները պայմանագրային կողմերի միջև, որոնք ուղղակիորեն վերագրելի են որոշակի պայմաններով վարկային պայմանագրին, գործարքի հետ կապված ծախսերին և այլ պարզեցված գումարներին կամ գեղջերին:

Տոկոսային եկամուտը/տոկոսային ծախսը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ոչ-վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ, նախքան ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի մասով ճշգրտումները) կամ ֆինանսական պարտավորությունների ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկերի գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների դեպքում տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը վարկերի գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքի նկատմամբ (համախառն հաշվեկշռային արժեքը, հանած ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստը):

**Վճարներ և կոմիսիոն ծախսեր.** Վճարները և կոմիսիոն ծախսերը իրենց մեջ ներառում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժան մաս հանդիսացող վճարներից բացի այլ վճարներ (տես վերոնշյալ բաժինը):

Ծառայությունների գծով վճարները և կոմիսիոն ծախսերը հաշվարկվում են ծառայությունների մատուցման ժամանակ:

**Ֆինանսական ակտիվներ.** Բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում և ապաճանաչվում են առևտրի օրվա դրությամբ, երբ ֆինանսական ակտիվի ձեռքբերումը կամ վաճառքը համաձայնեցվում է պայմանագրով, և ըստ այդ պայմանագրի պայմանների անհրաժեշտ է ապահովել ֆինանսական ակտիվի մատակարարումը համապատասխան շուկայում սահմանված ժամանակահատվածում, և սկզբնապես գնահատվում են իրական արժեքով, գումարած գործարքի գծով ծախսերը:

ՖՀՄՍ 9 շրջանակներում բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները պետք է հետագայում չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով, հիմք ընդունելով կազմակերպության ֆինանսական ակտիվների և ֆինանսական ակտիվների դրամային հոսքերի հատկանիշների կառավարման բիզնես մոդելը:

Մասնավորապես՝

- Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI), հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:
- Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է ոչ միայն հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, այլև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն



## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով:

- Բոլոր այլ պարտքային գործիքները (պարտքային գործիքներ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվը չափվում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով, եթե՝

- Ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի օրերին չեն առաջացնում դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, կամ
- Ակտիվը չի պահվում բիզնես մոդելում, որի նպատակն է կամ հավաքագրել, կամ և հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և վաճառել, կամ
- Սկզբնական ճանաչման պահին այն մշտական հիմունքներով դասակարգվել է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Այս պարագայում ակտիվի չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը վերանում կամ զգալիորեն նվազում է, որը հակառակ դեպքում կարող էր առաջանալ ակտիվների կամ պարտավորությունների գնահատումից կամ տարբեր հիմունքներով այդ ակտիվներից կամ պարտավորություններից առաջացած շահույթի կամ վնասի ճանաչումից:

Պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով կամ այլ համափակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող. Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի դասակարգումը և չափումը՝ հիմք ընդունելով ակտիվի՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հատկանիշները և ակտիվի կառավարման մասով Ընկերության բիզնես մոդելը: Ակտիվի, որը դասակարգվում և չափվում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով, պայմանագրային պայմանները պետք է առաջացնեն դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI).

SPPI թեստի նպատակներով, մայր գումար է հանդիսանում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ: Մայր գումարը կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում (եթե առկա են մայր գումարի մարումներ): Տոկոսն իրենից ներկայացնում է հատուցումներ ժամանակի մեջ դրամի արժեքի մասով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում չմարված մայր գումարի գծով վարկային ռիսկի և այլ հիմնական վարկային ռիսկերի և ծախսերի, ինչպես նաև շահույթի սահմանաչափի մասով: SPPI գնահատումը իրականացվում է այն արժույթով, որով արտահայտվում է ֆինանսական ակտիվը:

Պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, համապատասխանում են հիմնական վարկային համաձայնությանը: Պայմանագրային պայմանները, որոնք ներկայացնում են պայմանագրով նախատեսված այն դրամական հոսքերի ռիսկերի կամ անկայունության ենթարկվածությունը, որոնք չեն վերաբերվում հիմնական վարկային համաձայնությանը, ինչպիսիք են բաժնետոմսերի կամ ապրանքների գների փոփոխության ռիսկերի ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: Ստեղծված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվը կարող է հանդիսանալ հիմնական վարկային համաձայնագիր, անկախ այն բանից, որ այն հանդիսանում է վարկ իր իրավական ձևով:

Ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով բիզնես մոդելների գնահատումը իրականացվում է ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի դասակարգումը որոշելու նպատակով: Բիզնես մոդելը կիրառվում է հետադարձ հիմունքներով բոլոր այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք առկա են եղել ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Ընկերությունը որոշում է բիզնես մոդելների մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտիվների խմբերի համատեղ կառավարման ձևը հատուկ բիզնես նպատակների իրականացման համար: Ընկերության բիզնես մոդելը կախված է առանձին գործիքի մասով ղեկավարության

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

մտադրություններից, հետևաբար, բիզնես մոդելի գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ավելի բարձր մակարդակի համախմբման, այլ ոչ անհատապես դիտարկման սկզբունքը:

Ընկերությունն ունի մեկ բիզնես մոդել ֆինանսական գործիքների կառավարման մասով, որն արտացոլում է Ընկերության՝ իր ֆինանսական ակտիվների կառավարման մեթոդները դրամական հոսքեր ստեղծելու նպատակով: Ընկերության բիզնես մոդելները որոշում են, արդյոք դրամական միջոցները առաջանում են պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ այս երկու բաղադրիչների կիրառումից:

Բիզնես մոդելի գնահատման ընթացքում Ընկերությունը հաշվի է առնում հասանելի համապատասխան ողջ տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, այն գնահատումը չի իրականացվում հիմք ընդունելով այն սցենարները, որոնք Ընկերությունը չի կարող կանխատեսել, այսպես կոչված «վատագույն իրավիճակ» կամ «սթրեսային իրավիճակ» սցենարները:

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը որոշում է, արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվները հանդիսանում են արդեն առկա բիզնես մոդելի մաս կամ արդյոք արտացոլում են նոր բիզնես մոդելի սկիզբը:

Արժեզրկում. Ընկերությունը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստները հետևյալ ֆինանսական գործիքների մասով, որոնք շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չեն չափվում՝

- Դրամական միջոցների և դրանց համարժեքների;
- Այլ ակտիվներ:

Ակնկալվող վարկային կորուստները (ԱՎԿ) պետք է չափվեն կորուստների գծով պահուստի հաշվառման միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- Ակնկալվող վարկային կորուստները 12 ամիսների ընթացքում. ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքից ակնկալվող, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի դեֆոլտային իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Ամբողջական ակնկալվող վարկային կորուստներ. ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքում, այսինքն՝ կորուստներ, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր դեֆոլտային իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Ամբողջական ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի հաշվառում է պահանջվում, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱՎԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՎԿ-ի չափով:

Ակնկալվող վարկային կորուստները՝ ԱՎԿ-ները, վարկային կորուստների ներկա արժեքի՝ հավանականության վրա հիմնված հաշվարկներն են: Դրանք չափվում են Ընկերության պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որն Ընկերությունն ակնկալում է ստանալ տարբեր տնտեսական սցենարների համեմատության արդյունքում՝ զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով:

Ֆինանսական ակտիվների փոփոխությունը և ապաճանաչումը. Ֆինանսական ակտիվների փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև: Փոփոխությունը ազդեցություն է ունենում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում. Ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում:

**Ֆինանսական պարտավորություններ.** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կամ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ «այլ ֆինանսական պարտավորություններ»:

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (այդ թվում՝ վարկերը և փոխառությունները) սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի և տոկոսային ծախսի տեղաբաշխման հաշվարկի մեթոդ:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

**Անցման ազդեցությունը.** Ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման կատեգորիաների վերանայումը, ինչպես նաև ՀՀՄՍ 39 և ՀՀՄՍ 9 հաշվեկշռային արժեքների համադրումը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀՄՍ 9 ստանդարտի ընդունման արդյունքում ցույց է տալիս, որ նշանակալի ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ֆոնդի կողմից պահվող ֆինանսական ակտիվները չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

#### 4. **Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՀՀՄՍ), որոնք գործում են ընթացիկ տարում**

**Փոփոխություններ ՀՀՄՍ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների վրա.** ընթացիկ տարում ընդունվել են հետևյալ նոր և բարեփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանությունները՝

*ՀՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ*

Տես ծան. 3

*ՀՀՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ*

Ընկերությունն ընդունել է ՀՀՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ ստանդարտը 2018 թ. հունվարի 1-ից: Այս ստանդարտը ներկայացնում է հինգ քայլից բաղկացած մոդել հասույթի ճանաչման մասով: ՀՀՄՍ 15-ում ավելի մանրամասն նկարագրական ուղեցույց է ավելացվել յուրաքանչյուր դեպքերի պարագայում օգնելու նպատակով: ՀՀՄՍ 15 ստանդարտի ընդունումը փոփոխություններ է առաջացրել հաշվապահական հաշվառման քաղաքականության և ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների ճշգրտումների մասով:

ՀՀՄՍ 15 օգտագործում է «պայմանագրային ակտիվ» և «պայմանագրային պարտավորություն» տերմինները նկարագրելու այն հասկացությունները, որոնք ավելի հայտնի են որպես «հաշվեգրված հասույթ» և «հետաձգված հասույթ»: Սակայն, այս ստանդարտը չի արգելում Ընկերությանը օգտագործել այլընտրանքային նկարագրություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Քանի որ Ընկերությունը ճանաչում է հասույթը հիմնականում կառավարման վճարներից, ՀՀՄՍ 15 կիրառումը նշանակալի ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական վիճակի և/կամ կատարողականի վրա:

*ՀՀՄՍ 22. Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ*

ՀՀՄՍ 22-ը սահմանում է, թե ինչպես պետք է որոշել «գործարքի ամսաթիվը»՝ փոխարժեքը որոշելու նպատակով, որը կօգտագործվի ակտիվի, ծախսի կամ եկամտի սկզբնական ճանաչման ժամանակ, երբ այդ միավորի համար վճարումը

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Նախապես վճարվել է կամ ստացվել է արտարժույթով և հանգեցրել ոչ դրամային ակտիվի կամ պարտավորության ճանաչմանը (օրինակ, չփոխհատուցված ավանդ կամ հետաձգված եկամուտ):

Մեկնաբանությամբ պարզաբանվում է, որ գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ անձը կատարում է կանխավճարի ստացման կամ վճարման արդյունքում առաջացած ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության սկզբնական ճանաչումը: Եթե կանխավճարները կատարվել են կամ ստացվել են բազմակի անգամ, մեկնաբանությամբ պահանջվում է սահմանել յուրաքանչյուր կանխավճարի ստացման կամ վճարման ամսաթիվը:

### Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

Ընկերությունը չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված հետևյալ ՖՀՄՍ-ներ

- ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքների փոփոխություն<sup>1</sup>;
- ՖՀՄՍ 16 Վարձակալություն<sup>1</sup>;
- ՖՀՄՍ-ների 2015-2017 թթ. տարեկան բարելավումների ցիկլ<sup>1</sup>;
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդարտներում<sup>2</sup>;

1 Գործում է 2019 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակահատվածների համար, թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

2 Գործում է 2020 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակահատվածների համար, թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

### ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները գնահատում են, արդյոք կանխավճար բաղադրիչը բավարարում է SPPI թեստի պայմաններին, երբ պայմանագրի կողմը, կիրառելով այդ տարբերակը, կարող է վճարել կամ ստանալ խելամիտ փոխհատուցում կատարված կանխավճարի դիմաց, անկախ կանխավճարի նպատակից: Այլ կերպ ասած, բացասական փոխհատուցումով կանխավճարները ոչ միշտ է, որ միանշանակորեն չեն բավարարում SPPI թեստի պայմանները:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, որոնց վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է: Գոյություն ունեն հատուկ անցումային դրոյթներ՝ կախված այն բանից, արդյոք երբ են կիրառվել այդ փոփոխությունները առաջին անգամ, համեմատած ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման հետ:

Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը կարող է հետագայում նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

### ՖՀՄՍ 16 Վարձակալություն

**ՖՀՄՍ 16 Վարձակալություն ստանդարտի կիրառման ընդհանուր ազդեցությունը.** ՖՀՄՍ 16-ում ներկայացվում է վարձակալական ձեռնարկումների և հաշվապահական մոտեցումների սահմանման համապարփակ մոդել՝ նախատեսված վարձակալի և վարձատուի համար: ՖՀՄՍ 16-ը կփոխարինի վարձակալության վերաբերյալ գործող ուղեցույցը, ներառյալ ՀՀՄՍ 17-ի «Վարձակալություն» ստանդարտը և առնչվող մեկնաբանությունները 2019 թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած ժամանակաշրջանների համար: Ընկերությունն այս ստանդարտն առաջին անգամ կկիրառի 2019 թ. հունվարի 1-ից:

Ի հակադրություն վարձակալության հաշվապահական հաշվառման, ՖՀՄՍ 16-ը զգալի կերպով խթանում է ՀՀՄՍ 17 ստանդարտի՝ վարձակալի հաշվապահական հաշվառման պահանջները:

**Վարձակալության նոր սահմանման ազդեցությունը.** Ընկերությունը կօգտագործի ՖՀՄՍ 16-ին անցում կատարելու դեպքում հնարավորությունը և չի վերագնահատի, արդյոք պայմանագիրը հանդիսանում է կամ ներառում է

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

վարձակալություն: Հետևաբար, վարձակալության սահմանումը, ՀՀՄՍ 17 և ՀՖՄԿ 4 ստանդարտների համաձայն, շարունակվելու է կիրառվել այն վարձակալությունների մասով, որոնք ուժի մեջ են մտել կամ փոփոխվել նախքան 2019 թ. հունվարի 1:

Վարձակալության սահմանման մեջ փոփոխությունը վերաբերում է հիմնականում վերահսկողությանը: ՖՀՄՍ 16-ը տարբերակում է վարձակալական և ծառայությունների մատուցման պայմանագրերը այն մասով, արդյոք որոշակի ակտիվի օգտագործումը վերահսկվում է հաճախորդի կողմից: Վերահսկողություն գոյություն ունի, եթե հաճախորդն ունի՝

- Որոշակի ակտիվի օգտագործումից ստացված բոլոր տնտեսական օգուտների ձեռքբերման իրավունքը; և
- Տվյալի ակտիվի օգտագործումը տնօրինելու իրավունք:

Ընկերությունը կիրառելու է վարձակալության սահմանումը և համապատասխան ուղեցույցը բոլոր այն վարձակալական պայմանագրերի նկատմամբ, որոնք ուժի մեջ են մտել կամ փոփոխվել 2019 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո (վարձակալության պայմանագրում և վարձատուի, և վարձակալի պարագայում):

### **Ազդեցությունը վարձակալի հաշվապահական հաշվառման վրա**

Գործառնական վարձակալություն: ՖՀՄՍ 16 ստանդարտը փոխում է Ընկերության կողմից վարձակալության հաշվառման կարգը, որը նախկինում դասակարգվել է որպես գործառնական վարձակալություն, համաձայն ՀՀՄՍ 17 ստանդարտի, և համարվել արտահաշվեկշռային:

ՖՀՄՍ 16 սկզբնական կիրառման դեպքում Ընկերությունը բոլոր վարձակալությունների մասով (բացառությամբ ներքոնշյալի)՝

- (ա) Ճանաչելու է օգտագործման իրավունքով ակտիվները և վարձակալության պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որը սկզբնապես չափվել է ապագա վարձակալության վճարումների ներկա արժեքի հիման վրա,
- (բ) Ճանաչելու է օգտագործման իրավունքով ակտիվների մաշվածությունը և վարձակալության պարտավորությունների գծով տոկոսները համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում,
- (գ) Տարանջատելու է վճարված դրամական միջոցների ընդհանուր գումարը ըստ մայր գումարի (ներկայացված ֆինանսական գործունեությունում) և տոկոսի (ներկայացված գործառնական գործունեությունում) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Վարձակալական պայմանագրի կնքման խրախուսող պայմանները (առանց վարձավճարի օգտագործման ժամանահատված) ճանաչվելու են որպես օգտագործման իրավունքով ակտիվների և վարձակալության պարտավորությունների չափման մաս, այնինչ ՀՀՄՍ 17-ի համաձայն, դրանք հանգեցրել են պայմանագրային պարտավորության խրախուսող պայմանների ճանաչմանը, ամորտիզացված որպես վարձավճարի գծով ծախսերի նվազեցում՝ հիմնվելով գծային մեթոդի վրա:

ՖՀՄՍ 16-ի համաձայն, օգտագործման իրավունքով ակտիվները ստուգվելու են արժեզրկման առկայության համար, ըստ ՀՀՄՍ 36 *Ակտիվների արժեզրկում* ստանդարտի: Սա փոխարինելու է նախկին պահանջը խնդրահարույց վարձակալության պայմանագրերի պահուստի ճանաչման մասով:

Կարճաժամկետ վարձակալության (12 ամիս կամ պակաս ժամկետով վարձակալություն) և փոքրարժեք ակտիվների վարձակալության (օր.՝ անձնական համակարգիչներ և գրասենյակային կահույք) մասով Ընկերությունը կճանաչի վարձակալության գծով ծախսերը՝ հիմնվելով գծային մեթոդի վրա, ինչպես թույլատրվում է ՖՀՄՍ 16 ստանդարտով:

Ֆինանսական վարձակալություն: ՖՀՄՍ 16 և ՀՀՄՍ 17 ստանդարտների հիմնական տարբերությունը նախկինում ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների մասով հասնողիսանում է վարձակալի կողմից վարձատուին մնացորդային արժեքի մասով տրամադրվող երաշխիքների չափումը: ՖՀՄՍ 16 ստանդարտը պահանջում է, որպեսզի

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Ընկերությունը ճանաչի որպես վարձակալության պարտավորության մաս միայն այն գումարը, որը ենթակա է վճարման մնացորդային արժեքի երաշխավորության մասով, սակայն ոչ երաշխավորված առավելագույն գումարի մասով, ինչպես պահանջվում է ՀՀՄՍ 17-ով: Սկզբնական կիրառման դեպքում Ընկերությունը պետք է ներկայացնի գույքը, նախկինում ներառված հիմնական միջոցներում, օգտագործման իրավունքով ակտիվների հետ նույն տողում և վարձակալության պարտավորությունը, նախկինում ներկայացված փոխառությունում, պետք է ներկայացնի վարձակալության պարտավորությունների համար առանձին տողով:

Հիմք ընդունելով 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վարձակալությունների վերլուծությունը և տվյալ ամսաթվի դրությամբ առկա փաստերը և հանգամանքները՝ Ընկերության ղեկավարությունը եզրակացրել է, որ այդ փոփոխությունը էական ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

*Ազդեցությունը վարձատրի հաշվապահական հաշվառման վրա.* ՖՀՄՍ 16-ի համաձայն, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը որպես ֆինանսական կամ գործառնական վարձակալություն՝ դրանք հաշվառելով տարբեր հիմունքներով: Այնուամենայնիվ, ՖՀՄՍ 16-ը փոփոխել և ընդլայնել է պահանջվող բացահայտումները, մասնավորապես, թե ինչպես է վարձատուն կառավարում վարձակալված ակտիվներում մնացորդային տոկոսներից առաջացող ռիսկերը:

ՖՀՄՍ 16-ի համաձայն, միջանկյալ վարձատուն դիտարկում է հիմնական վարձակալության և ենթավարձակալության պայմանագրերը որպես առանձին պայմանագրեր: Միջանկյալ վարձատուն պարտավոր է դասակարգել ենթավարձակալությունը որպես ֆինանսական կամ գործառնական վարձակալություն՝ հղում կատարելով հիմնական վարձակալությունից առաջացող օգտագործման իրավունքով ակտիվին (առանց հղում կատարելու հիմնական ակտիվին՝ ՀՀՄՍ 17-ով նախատեսված):

Այս փոփոխությունների արդյունքում Ընկերությունը վերադասակարգելու է իր ենթավարձակալության պայմանագրերը որպես ֆինանսական վարձակալություն: ՖՀՄՍ 9-ի պահանջների համաձայն, ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստը ճանաչվելու է ֆինանսական վարձակալության գծով ստացման ենթակա գումարների մասով: Վարձակալված ակտիվները ապաճանաչվելու են և ստացման ենթակա գումարները ֆինանսական վարձակալության գծով ակտիվների մասով ճանաչվելու են: Այս փոփոխությունը հաշվապահակ հաշվառման մեջ կհանգեցնի համապատասխան հասույթի ճամկետների փոփոխմանը (ճանաչված ֆինանսական եկամուտում):

Ընկերությունը չի ակնկալում, որ ՖՀՄՍ 16-ի կիրառումը կարող է հետագայում նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

### **ՖՀՄՍ-ների 2015-2017 թթ. տարեկան բարելավումների ցիկլ**

ՖՀՄՍ-ների 2015-2017 թթ. տարեկան բարելավումների ցիկլով փոփոխություններ են կատարվում մի քանի ստանդարտների մեջ:

*ՀՀՄՍ 12 Շահութահարկեր.* ՀՀՄՍ 12-ի փոփոխություններով հստակեցվում է, որ կազմակերպությունը պարտավոր է ճանաչել շահաբաժինների գծով եկամտահարկի հետևանքները շահույթում կամ նվաստում, այլ համապարփակ եկամուտում կամ սեփական կապիտալում, կախված այն բանից, թե որտեղ է կազմակերպությունը սկզբնապես ճանաչել շահույթի տեղաբաշխմանը հանգեցնող գործարքները: Այս պայմանը կիրառվում է անկախ այն բանից, արդյոք կիրառվում են տարբեր հարկերի դրույքաչափեր տեղաբաշխված և չտեղաբաշխված շահույթի նկատմամբ: Բոլոր փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, պահանջվում է կիրառել փոփոխությունները հեռանկարային հիմունքներով: Թույլատրվում է վաղաժամկետ կիրառումը:

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը նշանակալի ազդեցություն կունենա Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդարտներում էականության սահմանումը.** Այս փոփոխությունների նպատակն է տալ «էականություն» տերմինի ավելի հասկանալի սահմանում ՀՀՄՍ 1 ստանդարտում և մտադրություն չունեն փոխել էականության հասկացությունը ՖՀՄՍ ստանդարտներում: «Անորոշ» էական տեղեկատվություն և ոչ էական տեղեկատվություն հասկացությունները ընդգրկվել են նոր սահմանման մեջ: Օգտագործողների որոշումների վրա ազդող էականության շեմի հասկացությունը «կարող է ազդել» եզրույթից փոփոխվել է՝ դառնալով «հավանականորեն հնարավոր է ազդեցություն ունենա»։ ՀՀՄՍ 8-ում էականության սահմանումը փոխարինվել է ՀՀՄՍ 1-ում էականության սահմանման հղումով: Ի լրումն, ՀՀՄՍ-ն փոփոխել է այլ Ստանդարտներն ու Հայցեկարգային հիմունքները, որոնք ներառում են էականության սահմանումը կամ հղում են կատարում «էական» տերմինին ստանդարտներին համապատասխանությունը ապահովելու նպատակով: Այս փոփոխությունները կիրառվում են հետանկարային հիմունքներով 2020 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է:

**Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, ներկայացման և հաշվարկի մեթոդներ, որոնք կիրառվել են միայն 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը շուկայում ընդունված պայմաններով կամ սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի և պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների), համապատասխանաբար ավելացվում կամ նվազեցվում են ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքից, սկզբնական ճանաչման պահին: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում:

**Ֆինանսական ակտիվներ.** ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ «շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ», «մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ», «տրամադրված վարկեր, դեբիտորական պարտքեր» և «վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

**Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.** ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվողներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող վերաչափման արդյունքում:

Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտիվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են համապատասխանաբար «շահույթով կամ վնասով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտներ և կորուստներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի, վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ.** մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Ընկերությունն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Եթե Ընկերությունը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը, ողջ դասը կորակազրկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Ընկերությանը կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու ֆինանսական տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

**Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ.** վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ (գ) վարկեր և դեբիտորական պարտքեր:

Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով: Իրական արժեքի փոփոխությունից օգուտը և վնասները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում և կուտակվում ներդրումների վերագնահատման պահուստում, բացառությամբ ոչ ժամանակավոր արժեզրկման կորուստների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի, շահաբաժինների տեսքով եկամտի, դրամային ակտիվների դեպքում՝ արտարժույթի փոխարկումից օգուտի և վնասի, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այն դեպքում երբ ներդրումն օտարվում է կամ համարվում է



## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

արժեզրկված, նախկինում ներդրումների վերագնահատման պահուստում կուտակված օգուտը կամ վնասը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

**Վարկեր և դեբիտորական պարտքեր.** առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում, դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

**Արժեթղթերի հետգնման և հակադարձ հետգնման գործարքներ.** իր գործունեության բնականոն ընթացքում Ընկերությունն ունենում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման պայմանագրեր (հետգնման), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի պայմանագրեր (հակադարձ հետգնման): Ընկերությունն օգտագործում է հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերը որպես իր գանձապետական կառավարման տարր:

Ռեպո համաձայնագիրը իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը՝ գումարած տոկոսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ: Ֆինանսական ակտիվները, որոնք վաճառվում են հետգնման պայմանագրերով, շարունակում են ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում, իսկ այս պայմանագրերի դիմաց ստացված հատուցումը հաշվառվում է որպես ապահովության միջոց հանդիսացող ավանդ՝ բանկերի հետ ավանդային գործիքներում:

Ընկերությունը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Արժեթղթերի փոխանցումը պայմանագրային կողմերին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխացվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

**Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.** Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատուցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատուցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ստացված հատուցի դիմած գրավադրված փոխառությունը:

Եթե Ընկերության շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

հարաբերական իրական արժեքների հիման վրա:

### Ֆինանսական պարտավորություններ և թողարկված բաժնային գործիքներ

**Որպես պարտք կամ սեփական կապիտալ դասակարգումը.** Ընկերության կողմից թողարկված պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալ՝ ելնելով պայմանագրային դրույթների էությունից, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի սահմանումներից:

**Բաժնային գործիքներ.** բաժնային գործիքը ցանկացած պայմանագիրն է, որը վկայում է ընկերության ակտիվներում մասնակցության մնացորդի վերաբերյալ՝ հանած բոլոր պարտավորությունները: Բաժնային գործիքները՝ թողարկված ընկերության կողմից ճանաչվում են որպես ստացված հատկացումներ՝ առանց ուղղակի թողարկման գծով ծախսերը:

Ընկերության կողմից իր իսկ բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում է և նվազեցվում անմիջականորեն սեփական կապիտալից: Ընկերության կողմից իր իսկ բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ չեղարկման դեպքում շահույթում կամ վնասում օգուտ կամ վնաս չի ճանաչվում:

### Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

**Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ.** ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ծանաչումը և չափումը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող բոլոր օգուտները կամ վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «տոկոսային ծախս» տողում՝ շահույթի կամ վնասի և

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով:

**Այլ ֆինանսական պարտավորություններ.** այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

**Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.** Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

### 5. Ռիսկերի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ են մի շարք ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, վարկային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ ոչ ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական, գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը: Այս ռիսկերի հայտնաբերումը և կառավարումը կարևորագույն դեր են խաղում Ընկերության հաջողության և ֆինանսական կայունության տեսանկյունից: Այս ծանոթագրությունը ներկայացնում է նշված ռիսկերի հավանականությունը Ընկերության համար, այդ ռիսկերի չափման և կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Ընկերությունը ակտիվ դեր ունի ռիսկերի կառավարման գործընթացում, ինչպես նաև ունի սահմանած քաղաքականություններ և ընթացակարգեր, համաձայն որոնց տարբեր ստորաբաժանումներ և վերահսկողություն իրականացնող միավորներ պատասխանատու են զանազան ռիսկերի հայտնաբերման, չափման և վերահսկողության իրականացման համար: Ռիսկերի կառավարման աշխատանքների վերահսկողությունն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը, որը պատասխանատու է ռիսկի գործոնների ուսումնասիրության և վերահսկողության համար, և վարում է ռիսկերի կառավարման քաղաքականության և գործընթացների շարունակական մշակման և բարելավման աշխատանքները: Առանձնահատուկ ռիսկ պարունակող ոլորտներն են՝

- Վարկային և շուկայական ռիսկերը, որոնք առաջանում են որոշակի արժեթղթերի գծով դիրքերի ձեռքբերման հետևանքով,
- տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության ռիսկերը, որոնց գծով առանձնահատուկ ուշադրություն պահանջող ոլորտներն են տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության քաղաքականությունը, ընթացակարգերը և վերահսկողությունները,
- ներդրումների կառավարումը, որտեղ առանձնահատուկ ուշադրություն են պահանջում այն գործողությունները,

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

- որտեղ Ընկերությունը և նրա պրինցիպալները հանդես են գալիս որպես ներդրումային կառավարիչներ,
- գործառնական ռիսկերը, որտեղ առանձնահատուկ կարևորություն է տրվում ներքին գործընթացների, մարդկային ռեսուրսների և համակարգերի աշխատանքների ոչ պատշաճ կատարմանը կամ խափանմանը կամ արտաքին միջադեպերի կամ հարաբերությունների (մատակարարներ, գործընկերներ) գծով առաջանալիք ռիսկերին:

Ղեկավարության կողմից սահմանված են քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնցով պետք է առաջնորդվեն աշխատակիցները՝ հաճախորդների հետ հարաբերություններում, ինչպես նաև զանազան գործընկերների հետ փոխհարաբերություններ կառուցելու պայմանները: Հաճախորդներին առնչվող քաղաքականություններում անդրադարձ է արված հաճախորդների կողմից Ընկերության ֆոնդերում մասնակցության, տվյալների և ֆիզիկական անվտանգության, ոլորտի կանոնակարգերի և էթիկայի կանոնների պահպանման հարցերին, ինչպես նաև կարգավորվում են աշխատակիցների և խորհրդատուների վարքագծի կանոնները:

Ընկերության գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Հետևաբար, չնայած ռիսկային ոլորտների հայտնաբերմանն ուղղված քայլերին, ինչպես նաև ռիսկերի կառավարման քաղաքականություններին և ընթացակարգերին, չի կարելի բացառել, որ Ընկերությունը կարող է անկանխատեսելի վնասներ կրել գործառնական և այլ ռիսկերի առաջացման արդյունքում:

### ա. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերն այն ռիսկերն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքներից, որոնց հակված է Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ ավարտին: Ֆինանսական ռիսկն իրենից ներկայացնում է շուկայական ռիսկը (ներառյալ՝ տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի ռիսկը և այլ գնային ռիսկերը), վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ֆինանսական ռիսկի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է՝ սահմանել ռիսկի սահմանաչափերը, այնուհետև՝ ապահովել, որ ռիսկի հակվածությունը մնա այդ սահմանաչափի շրջանակներում:

### Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը կորստի ռիսկն է, որ կարող է առաջանալ փոխառուի, թողարկողի կամ պայմանագրային կողմի՝ պայմանավորվածության համաձայն ֆինանսական պարտավորությունները կատարելու կարողության վատթարացման արդյունքում: Ընկերությունը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ընկերությունը փորձում է կառավարել իր վարկային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: Ընկերությունը կարող է կատարել ֆինանսավորման ապահով գործարքներ, մասնավորապես՝ վաճառքի և հետգնման պայմանագրեր (ռեպո պայմանագրեր), կամ գնման և վերավաճառքի պայմանագրեր (հակադարձ հետգնման պայմանագրեր): Ապահով գործարքների գծով, որոնք ներառում են հետգնման և վերավաճառքի պայմանագրեր, Ընկերությանը թույլ է տրվում վաճառել կամ վերագրավադրել որպես գրավ պահվող արժեթղթերը և օգտագործել այս արժեթղթերը դրանց փոխառության գործարքներում, կամ փոխանցել պայմանագրային կողմերին՝ կարճ դիրքերի փակման նպատակով:

Ընկերությունը պատասխանատու է վարկային ռիսկի վերահսկողության համար և պատասխանատու է Ընկերության վարկային ռիսկի կառավարման համար, այդ թվում՝ պարտքային քաղաքականության ձևակերպում, գրավի պահանջների բավարարում, վարկերի գնահատում, վարկային ռիսկի ուսումնասիրություն և գնահատում, պայմանագրային կողմերի գծով, ինչպես նաև ըստ թողարկողի, վարկային ռեյտինգի միջակայքերի, շուկայի իրացվելիության և երկրի գծով կուտակումների սահմանափակում: Ղեկավարությունը չունի ներքին վարկանշման համակարգ և վարկային ռիսկը կառավարելու նպատակով կանոնավորապես գնահատում է ակտիվների որակը, սահմանում է իր ռիսկի «սխորժակը»՝ կիրառելով, ի թիվս այլ միջոցների, սահմանափակումների քաղաքականություն, խոշոր գործարքների գծով սահմանելով հաստատումների մեխանիզմ:

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

2018 թ. և 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվների վարկային ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

(հազար ՀՀ դրամ)	2018 թ. դեկտեմբերի 31	2017 թ. դեկտեմբերի 31	Երկիր	Վարկանիշ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	36	Հայաստան	Չվարկանշված
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	224,628	222,683	Հայաստան	Չվարկանշված
Այլ ֆինանսական ակտիվներ	4,947	8,327	Հայաստան	Չվարկանշված
	<b>229,582</b>	<b>231,046</b>		

2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվները ՀՀ տարածքում գտնվող գործարքային կողմերի հետ են, ֆինանսական ակտիվներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

Ընկերությունը ենթակա է վարկային ռիսկերի դրամի շուկայի միջոցների և համանման արժեթղթերի մասով: Ֆինանսական ակտիվների այսպիսի դասակարգերը ենթակա չեն ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջներին, քանի որ դրանք չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Այս ակտիվների հաշվեկշռային արժեքները, ՀՀՄՍ 39 (2017 թ.) և ՖՀՄՍ 9 (2018 թ.) ստանդարտների համաձայն, ներկայացնում են վարկային ռիսկի առավելագույն չափը այս ֆինանսական գործիքների մասով: Հետևաբար, այդ գործիքների մասով վարկային ռիսկի առավելագույն չափի գծով առանձին բացահայտումներ չեն տրամադրվում:

### Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել կանխիկով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Ընկերությունը իրացվելիության լրացուցիչ մակարդակ է ապահովում՝ օվերնայթ կանխիկ միջոցներով և կարճաժամկետ ներդրումներով, դրանով իսկ ապահովելով օրական ֆինանսավորման կարիքները: Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են արժեթղթերով ներդրումային գործունեությունը, փայերի բաժանորդագրման և մարման տեմպերը: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել էական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:

Ընկերության քաղաքականությունը իրացվելիության կառավարման հարցում կայանում է նրանում, որպեսզի Ընկերությունը ունենա բավարար իրացվելիություն պատրավորությունների կատարման, ներառյալ՝ փայերի մարման համար, թե ընթացիկ, և թե սթրեսային իրավիճակներում՝ առանց Ընկերության վարկանիշին անընդունելի վնաս հասցնելու կամ կորուստներ առաջացնելու:

Ստորև ներկայացված աղյուսակում 2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են զեղչված հիմունքով և հիմնված են դրանց պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի վրա: Ըստ ղեկավարության գնահատումների, որոշակի ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող դրամական հոսքերը տարբերվելու են դրանց պայմանագրով նախատեսված պայմաններից, ելնելով նրանից, որ ղեկավարությունը կարող է իր հայեցողությամբ տնօրինել դրամական հոսքերը, կամ նախորդ փորձը ցույց է տալիս, որ դրամական հոսքերը կարող են տարբերվել պայմանագրով նախատեսված պայմաններից: Ղեկավարությունը տնօրինում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, որն իրացվելի է և կարող է օգտագործվել ֆինանսական պարտավորությունների արտահոսքերն ապահովելու համար: Ըստ ղեկավարության գնահատականի, ֆինանսական պարտավորությունների չզեղչված հոսքերն էապես չեն տարբերվում ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված տվյալներից և լրացուցիչ չեն ներկայացվում:

(հազար ՀՀ դրամ)

2018 թ. դեկտեմբերի 31

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

	Հաշվեկշռա- յին արժեք	Մինչև 1 ամիս	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Առանց ժամկե- տայնության
<b>Ֆինանսական ակտիվներ</b>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	7	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	224,628	-	-	-	-	224,628
Այլ ֆինանսական ակտիվներ	4,947	4,947	-	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>229,582</b>	<b>4,954</b>	-	-	-	<b>224,628</b>

### Ֆինանսական

#### պարտավորություններ

Պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր	1,669	1,669	-	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>1,669</b>	<b>1,669</b>	-	-	-	-
<b>Զուտ դիրք</b>	<b>227,913</b>	<b>3,285</b>	-	-	-	<b>224,628</b>

(հազար ՀՀ դրամ)

2017 թ. դեկտեմբերի 31

	Հաշվեկշռա- յին արժեք	Մինչև 1 ամիս	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Առանց ժամկե- տայնության
<b>Ֆինանսական ակտիվներ</b>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	36	36	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	222,683	-	-	-	-	222,683
Այլ ֆինանսական ակտիվներ	8,327	8,327	-	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>231,046</b>	<b>8,363</b>	-	-	-	<b>222,683</b>

### Ֆինանսական

#### պարտավորություններ

Պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր	1,793	1,793	-	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>1,793</b>	<b>1,793</b>	-	-	-	-
<b>Զուտ դիրք</b>	<b>229,253</b>	<b>6,570</b>	-	-	-	<b>222,683</b>

### Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայում գործող գների փոփոխությունները, ինչպիսիք են տոկոսադրույքի ռիսկը, արժեթղթերի արժեքի, արտարժույթի փոխարժեքի և վարկային սպեղների փոփոխությունները կազդեն Ընկերության եկամուտների կամ ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը: Ընկերությունն իրականացնում է իր ներդրումային գույքի կառավարումն ըստ արտադրանքի տեսակի և օրական կտրվածքով:

### Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերությանը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ընկերության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

պարտավորությունների մարման ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

Տոկոսային եկամտի վրա կարող են ազդեցություն ունենալ այդ ակտիվների ծավալի և համադրության, ինչպես նաև տոկոսադրույքների և պորտֆելի կառավարման ռազմավարության տատանումները: Երբ տեղի է ունենում տոկոսադրույքների անկում, Ընկերությունը կարող է փորձել մեղմել այդ անկման բացասական ազդեցությունը՝ ավելացնելով ներդրումային պորտֆելում ակտիվների մարման ժամկետները՝ ակտիվի եկամտաբերությունը անփոփոխ թողնելու նպատակով:

Ստորև ներկայացված է տոկոսադրույքի միջակայքի դիրքը ֆինանսական գործիքների գծով:

(հազար դրամ)	2018 թ. դեկտեմբերի 31		
	Հաշվեկշռային արժեք	1 ամսից պակաս	Ոչ տոկոսակիր
<b>Ֆինանսական ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	7	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	224,628	-	224,628
Այլ ֆինանսական ակտիվներ	4,947	-	4,947
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>229,582</b>	<b>7</b>	<b>229,575</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>			
Պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր	1,669	-	1,669
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>1,669</b>	<b>-</b>	<b>1,669</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>227,913</b>	<b>7</b>	<b>227,906</b>

(հազար դրամ)	2017 թ. դեկտեմբերի 31		
	Հաշվեկշռային արժեք	1 ամսից պակաս	Ոչ տոկոսակիր
<b>Ֆինանսական ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	36	36	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	222,683	-	222,683
Այլ ֆինանսական ակտիվներ	8,327	-	8,327
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>231,046</b>	<b>36</b>	<b>231,010</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>			
Պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր	1,793	-	1,793
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>1,793</b>	<b>-</b>	<b>1,793</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>229,253</b>	<b>36</b>	<b>229,217</b>

Ընկերության ղեկավարությունը չի իրականացնում տոկոսադրույքի ռիսկի զգայունության վերլուծություն, քանի որ այն համարում է, որ Ընկերությունը ենթարկված չէ տոկոսադրույքի փոփոխությունների՝ լողացող տոկոսադրույքով պարտավորությունների և փոխառությունների բացակայության պարագայում, ինչպես նաև տոկոսակիր ակտիվների և առևտրային նպատակով պահվող ակտիվների բացակայության պարագայում:

### Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ընկերության գործառնական արժույթով չեն պահվում:

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ենթարկված չէր արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը:

### Այլ գնային ռիսկեր

Ընկերությունը ենթարկվում է փայերի գների գծով ռիսկերի, որոնք առաջանում են կառավարվող ֆոներում պահվող փայերից: Ընկերությունը ակտիվորեն առքուվաճառքի չի ենթարկում այս ներդրումները: Ստորև նշված զգայունության վերլուծությունը կատարվել է՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջում զուտ ակտիվների արժեքի գնային ռիսկերից:

Եթե զուտ ակտիվների արժեքը լիներ 5% բարձր (ցածր) 2018 թ. օգուտը կաճեր (կնվազեր) 11,231 հազար (2017 թ.՝ 11,134 հազար) դրամով՝ համապատասխան ֆոնդերում պահվող փայերի իրական արժեքի փոփոխության արդյունքում:

### ա. Գործառնական ռիսկ

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները, ինչպես նաև իր հեղինակությանը հասցվող վնասը: Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության ձևավորման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ընկերության գործադիր մարմինը:

### բ. Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով բաժնետերերի շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Նախորդ տարվա ընթացքում Ընկերությունը ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապված բոլոր արտաքին պայմաններին:

### գ. Ոչ ֆինանսական ռիսկերի կառավարում

#### Տեխնոլոգիական և գործառնական ռիսկեր

Ընկերությունը ենթակա է տեխնոլոգիական և գործառնական ռիսկերի, որն իրենից ներկայացնում է Ընկերության, նրա մատակարարների կամ նրան ծառայություն մատուցող կողմերի վերահսկողության ընթացակարգերում կամ տեխնոլոգիական համակարգերում առկա թերությունների արդյունքում հնարավոր կորուստները, որոնք սահմանափակում են տեղեկատվության հավաքագրման, մշակման և հաղորդակցման հնարավորությունը, իր սեփական, ինչպես նաև փայատերերի գործարքները արդյունավետ և անխափան իրականացնելու հնարավորությունը: Այս ռիսկը նաև ներառում է մարդկային սխալի, աշխատակիցների ոչ պատշաճ վարքագծի, համակարգչային վիրուսների, տեղեկատվական հարձակումների, ահաբեկչության, ինչպես նաև բնական աղետների ռիսկը:

Ընկերության գործառնականությունները մեծապես պայմանավորված են իր տեխնոլոգիական համակարգերի ամբողջական և անխափան գործունեությունից և հաջողության գրավականը մասնավորապես նաև կայանում է տեխնոլոգիաների ժամանակին բարելավումներով՝ հաշվի առնելով հաճախորդի հետզհետե փոփոխվող կարիքները: Ընկերության համակարգերի խափանումների, սխալների կամ անսարքության դեպքում, գործառնականությունները կարող են զգալի բացական ազդեցություն կրել: Գործունեության նման խափանումներից խուսափելու համար, Ընկերությունը վարում է կրկնօրինակման և տվյալների վերականգնման գործառնականություններ, այդ թվում՝ տվյալների կրկնօրինակման և հաղորդակցության ապահովման միջոցներ, ինչպես նաև իրականացնում է աղետների դեպքում տվյալների վերականգնման ստուգումներ:

Գործառնական ռիսկը մեղմացնող հսկողական մեխանիզմներ մշակման և ներդրման համար առաջնահերթ պատասխանատվություն է կրում ղեկավար անձնակազմը: Ընկերությունն ունի տվյալների հետ աշխատանքի



## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

ստանդարտները կարգավորող քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք անդրադառնում են թե ներքին տեղեկատվությանը, աշխատակիցների անձնական տվյալներին, և թե ոչ հանրային սեփականություն հանդիսացող՝ հաճախորդի տվյալներին: Տվյալների անվտանգության գծով անցկացվում են կանոնավոր վերապատրաստումներ: Անկախ ռիսկերի կառավարման աշխատանքներից, ոչ միշտ է հնարավոր կանխել կամ կանխարգելել տեխնոլոգիական կամ գործառնական գործընթացների խափանումները, ինչպես նաև կեղծիքի կամ այլ խեղաթյուրումների հավանականությունը, հետևաբար՝ Ընկերության կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները ոչ բոլոր դեպքերում կարող են արդյունավետ լինել: Ընկերության կարող է ենթարկվել դատական հայցերի, կրել վնասներ և կանոնակարգային պատժամիջոցների ենթարկվել, և կարող են ստիպված լինել բավականաչափ միջոցներ ներդնել խոցելի կետերը և այլ ռիսկերի արդյունքները մեղմելու և վերականգնելու ուղղությամբ:

### Կարգավորման ռիսկեր

Որպես արժեթղթերի, ակտիվների կառավարման շուկայի մասնակից, Ընկերությունը ենթակա է պետական գործակալությունների և վերահսկող մարմինների կողմից կանոնակարգման: Այս կանոնակարգող մարմինները սովորաբար ըստ իրենց հայեցողության իրավասու են ավելի մեծ սահմանափակումներ սահմանել կանոնակարգվող միավորի գործունեության համար՝ նպատակ ունենալով պաշտպանել ներդրողների կամ հանրության շահերը: Կառավարիչը նաև ենթակա է կարգավորիչ կամ կարգավորման պահանջների, որոնք մասնավորապես առնչվում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պարտավորություններին, կառավարման վճարներին, համապատասխանության գործողությունների իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, գովազդման, կառավարչի և հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայտման, ինչպես նաև կեղծիքից պաշտպանվածության ընդհանուր դրույթներին:

Ղեկավարությունը զգալի ներդրում է կատարել իր գործունեությանն առնչվող տարաբնույթ իրավաբանական և կանոնակարգային պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ: Չնայած օրենսդրական և կանոնակարգային պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ կատարված քայլերին, առկա են մի շարք ռիսկեր, մասնավորապես այն մասով, որ կանոնակարգային դաշտը կարող է լինել ոչ հստակ կամ կանոնակարգող մարմնի կողմից կարող են վերանայվել դրանց կիրառման ցուցումները: Կանոնակարգող մարմնի կողմից Կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված անձանց, աշխատակիցների, պաշտոնատար անձանց հանդեպ ցանկացած հարկադրանք կարող է հանգեցնել տույժերի, տուգանքների, դադարեցման կամ չեղյալ հայտարարման հրամանների, հարկադիր գործողությունների, կասեցման կամ լիազորությունների դադարեցման, կամ այլ կարգապահական միջոցների գործադրմանը, ընդհուպ մինչև գործունեության սահմանափակումը: Նշվածներից ցանկացածի պարագայում Ընկերության վարկանիշը կարող է վնաս կրել և դա կարող է բացասաբար ազդել գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա: Պահանջների հետ համապատասխանության բացակայության արդյունքում կարող են կիրառվել զգալի դրամական և ոչ դրամական պատժամիջոցներ:

### 6. Ֆոնդերի կառավարման գործունեությունը

2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրությամբ, Ընկերության ֆոնդերի կառավարման գործունեությունն իրենից ներկայացրել է երեք ֆոնդերի կառավարում, որոնք գործարկվել են 2013 թվականի ընթացքում, ինչպես նաև ևս երկու ֆոնդի գործարկում՝ 2017 թ. ընթացքում: Կառավարման վճարներից ընդհանուր եկամուտը 2018 թվականին կազմել է 37,317 հազար դրամ (2017 թ.՝ 19,184 հազար դրամ)՝ հաշվարկված համապատասխան ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ:

### 7. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով զուտ օգուտ

(հազար ՀՀ դրամ)	2018 թ.	2017 թ.
Իրական արժեքի զուտ փոփոխություն	22,162	36,478

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

<b>Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով զուտ օգուտ</b>	<b>22,162</b>	<b>36,478</b>
--	---------------	---------------

### 8. Կոմիսիոն եկամուտ

Վաստակած կոմիսիոն եկամուտն իրենից ներկայացնում է Ընկերության կողմից կառավարվող երեք ֆոնդերի փայերի թողարկման դիմաց ստացված վճարը: Ընդհանուր կոմիսիոն եկամուտը 2018 թ. կազմել է 4,259 հազար դրամ (2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 182 հազար դրամ)՝ հաշվարկված հիմք ընդունելով համապատասխան ֆոնդերի թողարկված փայերի արժեքը:

### 9. Վարչական ծախսեր

(հազար ՀՀ դրամ)	2018 թ.	2017 թ.
Աշխատակիցների հատուցումներ	13,775	18,178
Գործառնական վարձակալության գծով ծախս	9,955	10,032
Մասնագիտական ծառայություններ	6,750	6,400
Շահութահարկից բացի այլ հարկեր	2,100	2,106
Մաշվածություն և ամորտիզացիա	1,356	1,562
Կոմունալ և այլ գրասենյակային ծախսեր	1,017	37
Հաղորդակցություն	35	977
Այլ	552	698
<b>Ընդամենը վարչական ծախսեր</b>	<b>35,540</b>	<b>39,990</b>

### 10. Շահութահարկ

(հազար ՀՀ դրամ)	2018 թ.	2017 թ.
Հետաձգված հարկի գծով օգուտ	4,972	-
<b>Ընդամենը շահութահարկի գծով օգուտ</b>	<b>4,972</b>	-

Ընկերությունը չափում և հաշվառում է իր ընթացիկ շահութահարկը և հարկվող բազան իր ակտիվներում և պարտավորություններում՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրության պահանջների, որոնք կարող են տարբեր լինել ՖՀՄՍ պահանջներից:

Ընկերությունը ենթակա է որոշակի մշտական հարկային տարբերությունների, որոնք պայմանավորված են որոշակի ծախսերի՝ հարկային տեսանկյունից չնվազեցվող լինելու, ինչպես նաև որոշակի եկամուտների՝ հարկային տեսանկյունից չհարկվող համարվելու հետ:

Հետաձգված հարկերն իրենցից ներկայացնում են ֆինանսական հաշվառման և հարկային հաշվառման նպատակով օգտագործված՝ ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև ժամանակավոր տարբերությունների զուտ հարկային հետևանքները: 2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավոր տարբերություններն առավելապես իրենցից ներկայացնում են եկամուտների և ծախսերի ճանաչման տարբեր մեթոդներին/ժամկետներին, ինչպես նաև՝ հարկային հաշվառման մեջ որոշակի ակտիվների համար հարկվող բազայի գոյացման ժամանակավոր տարբերություններ:

Ստորև ներկայացված համեմատության նպատակով օգտագործված շահութահարկի դրույքաչափը կազմում է 20%, որը ՀՀ կազմակերպությունների կողմից կիրառվում է հարկման ենթակա շահույթի նկատմամբ (ինչպես սահմանված է)՝ համաձայն ՀՀ գործող հարկային օրենսդրության:

(հազար ՀՀ դրամ)	2018 թ. դեկտեմբերի 31		2017 թ. դեկտեմբերի 31	
Շահույթ մինչև հարկումը	28,088		15,731	
Հարկման դրույքաչափով հաշվարկված հարկ	5,618	20.00%	3,146	20.00%

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Չհարկվող եկամուտ	(4,503)	(16.04)%	(7,296)	(46.38)%
Չնվազեցվող ծախսեր	91	0.32%	-	0%
Նախկինում չճանաչված հարկային կորուստների օգտագործումը	(1,263)	(4.5)%	-	0%
Նախկինում չճանաչված հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը	(4,915)	(17.5)%	-	0%
<b>Չճանաչված հետաձգված հարկային ակտիվներ</b>	-	-	4,150	26.38%
<b>Շահութահարկի գծով օգուտ</b>	<b>(4,972)</b>	<b>(17.72)%</b>	-	-

2017 թ. դեկտեմբերի դրությամբ Ընկերությունը հաջորդ ժամանակաշրջան է տեղափոխել հարկային վնասները և այդ վնասների մասով առաջացած չճանաչված հետաձգված հարկային ակտիվները 17,132 հազար դրամ գումարի չափով: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կազմակերպությունն օգտագործել է 1,263 հազար դրամ հաշվետու ժամանակաշրջան տեղափոխված չճանաչված հետաձգված հարկային ակտիվ: Հաշվի առնելով Ընկերության գործունեության արդյունքները և ղեկավարության կանխատեսումները, ղեկավարությունը մասնակի ճանաչել է հետաձգված հարկային ակտիվ հարկային վնասի հետևանքով առաջացած նախկինում չճանաչված հարկային ակտիվի հաշվին: Մասնավորապես 4,972 հազար դրամ ճանաչվել է որպես հետաձգված հարկային ակտիվ 2018 դեկտեմբերի 31-ի դրությամբ, որից 4,915 հազար դրամը ներկայացնում է հաջորդ ժամանակաշրջան տեղափոխված չճանաչված հետաձգված հարկային ակտիվների մնացորդը, իսկ 57 հազար դրամն առաջացել է ընթացիկ տարում: Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխված չճանաչված հետաձգված հարկային ակտիվների մնացորդը ներառում է 3,788 հազար դրամ, որը առաջացնում է 12,081 հազար դրամ չճանաչված հետաձգված հարկային ակտիվ 2018 դեկտեմբերի 31-ի դրությամբ չօգտագործված հարկային վնասների առնչությամբ: Չօգտագործված հարկային վնասների գործողության ժամկետը 2019-ից 2022 թվականն է:

Ստորև ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետաձգված հարկային ակտիվների / (պարտավորությունների) վերլուծությունը:

(հազար դրամ)	2018 թ. դեկտեմբերի 31	Շահույթում կամ վնասում ճանաչված	2017 թ. դեկտեմբերի 31	Շահույթում կամ վնասում ճանաչված	2016 թ.
<b>Հետաձգված հարկային ակտիվներ</b>					
Պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր	1,157	(1,157)	-	-	-
Հիմնական միջոցներ	27	(27)	-	-	-
Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանին փոխանցված հարկային վնասներ	3,788	(3,788)	-	-	-
<b>Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ</b>	<b>4,972</b>	<b>(4,972)</b>	-	-	-
<b>Հետաձգված հարկային պարտավորություններ</b>					
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	-	-	-	-	-
<b>Ընդամենը՝ հետաձգված հարկային պարտավորություններ</b>	-	-	-	-	-
<b>Չուտ հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)</b>	<b>4,972</b>	<b>(4,972)</b>	-	-	-

### 11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(հազար դրամ)	2018 թ.	2017 թ.
--------------	---------	---------

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

	դեկտեմբերի 31	դեկտեմբերի 31
Ընթացիկ հաշիվներ	7	36
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	36

### 12. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

(հազար դրամ)	2018 թ. դեկտեմբերի 31	2017 թ. դեկտեմբերի 31
Փայեր Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերում	224,628	222,683
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	224,628	222,683

Ֆոնդերի փայերում ներդրումները իրենցից ներկայացնում են փայեր ԿԱՄավոր 1, ԿԱՄավոր 2 և ԿԱՄ ՊԱՖ ֆոնդերում համաձայն Ընկերության ներդրումային կառավարման: Այս փայերը ներկայացվում են ֆոնդերի ակտիվների զուտ արժեքում Ընկերության մասնաբաժնով հաշվետու ամսաթվի դրությամբ:

### 13. Այլ ակտիվներ

(հազար դրամ)	2018 թ. դեկտեմբերի 31	2017 թ. դեկտեմբերի 31
<b>Ֆինանսական ակտիվներ</b>		
Ֆոնդերից ստացման ենթակա միջոցներ	4,932	8,312
Այլ	15	15
Ընդամենը ֆինանսական այլ ակտիվներ	4,947	8,327
<b>Ոչ ֆինանսական ակտիվներ</b>		
Կանխավճարներ	1,003	1,023
Այլ	80	80
Ընդամենը ոչ ֆինանսական այլ ակտիվներ	1,083	1,103
Ընդամենը այլ ակտիվներ	6,030	9,430

### 14. Բաժնետիրական կապիտալ

Համաձայն կանոնադրության, Ընկերության արտոնված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 30,000 հասարակ բաժնետոմսերից: 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմել է 207,900 հազար ՀՀ դրամ (2017 թ.՝ 207,900 ՀՀ դրամ), որն իրենից ներկայացնում է 21,000 սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 9,900 ՀՀ դրամ արժողությամբ (2017 թ.՝ 21,000 սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 9,900 ՀՀ դրամ արժողությամբ): 2018 թ. ընթացքում վճարվել է 31,080 հազար դրամի չափով շահաբաժին, որից 10,080 հազար դրամը՝ որպես միջանկյալ շահաբաժիններ 2018 թ. ընթացքում (2017 թ. ընթացքում հայտարարագրվել և վճարվել է 7,350 հազար դրամի չափով շահաբաժին):

Սովորական բաժնետոմսերը տնօրինողները իրավունք ունեն ստանալ հայտարարված շահաբաժիններ և ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք: Հաշվետու ամսաթվի դրությամբ, բաժնետիրական կապիտալի 100%-ի սեփականատեր էր հանդիսանում Կապիտալ Ինվեստմենթս ՓԲԸ-ն: Ընկերությունը ենթակա է կապիտալի համարժեքության պահանջներին, որը, համաձայն գործող օրենսդրության, կազմում է 200,000 հազար ՀՀ դրամ (2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 200,000 հազար ՀՀ դրամ):

Համաձայն ՀՀ օրենսդրության, Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են չբաշխված շահույթի մնացորդով, որը ներկայացված է Ընկերության ֆինանսական հաշվետվություններում՝ պատրաստված ՀՀ

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

օրենսդրության պահանջների համաձայն, բացառությամբ չբաշխված շահույթի գծով սահմանափակումների, որոնք ներկայացված են ստորև: Ըստ օրենսդրության պահանջի և Ընկերության կանոնադրության, Ընկերությունը պարտավոր է ձևավորել բաժնետիրական կապիտալի 15% չափով չբաշխվող պահուստ իր չբաշխված շահույթից, ապագա վնասները ծածկելու համար:

### 15. Պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր

(հազար դրամ)	2018 թ. դեկտեմբերի 31	2017 թ. դեկտեմբերի 31
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>		
Պարտավորություններ	1,080	1,079
Այլ	589	714
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>1,669</b>	<b>1,793</b>
<b>Ոչ ֆինանսական պարտավորություններ</b>		
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	3,383	3,107
Հաշվեգրված ծախսեր	720	720
<b>Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ</b>	<b>4,103</b>	<b>3,827</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր</b>	<b>5,772</b>	<b>5,620</b>

### 16. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա մայր ընկերությունը, գլխավոր բաժնետերերը, կառավարվող ֆոնդերը, Ընկերության ղեկավարությունը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության վերջնական վերահսկողություն իրականացնում է պրն. Տիգրան Կարապետյանը:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

(հազար ՀՀ դրամ)	2018 թ. դեկտեմբերի 31		
	Բաժնետերեր և մայր ընկերություն	Հիմնական ղեկավար անձնակազմ	Կառավարվող ֆոնդեր
<b>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>			
Կառավարման վճարներ	-	-	37,317
Ղեկավար անձնակազմի վարձատրություն՝ ներառված վարչական ծախսերում	-	(7,420)	-
Կոմիսիոն եկամուտ	18	-	4,241
Գործառնական վարձակալության ծախսեր՝ ներառված վարչական ծախսերում	(9,955)	-	-
<b>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</b>			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	224,628
Այլ ակտիվներ	1,003	-	4,932

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

Պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր	(1,051)	-	-
<b>(հազար ՀՀ դրամ)</b>	<b>2017 թ. դեկտեմբերի 31</b>		
	<b>Բաժնետերեր և մայր ընկերություն</b>	<b>Հիմնական ղեկավար անձնակազմ</b>	<b>Կառավարվող ֆոնդեր</b>
<b>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>			
Կառավարման վճարներ	-	-	19,184
Ղեկավար անձնակազմի վարձատրություն՝ ներառված վարչական ծախսերում	-	(7,360)	-
Կոմիսիոն եկամուտ	18	-	164
Գործառնական վարձակալության ծախսեր՝ ներառված վարչական ծախսերում	(10,032)	-	-
<b>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</b>			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	222,683
Այլ ակտիվներ	1,003	-	8,312
Պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր	(1,051)	-	-

**17. Ֆինանսական գործիքների իրական արժեք**

Ընկերության մի շարք հաշվապահական հաշվառման քաղաքականություններ և բացահայտումներ պահանջում են, որ իրական արժեքը որոշվի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: ՖՀՄՍ սահմանամաճ, իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև չափման ամսաթվի դրությամբ սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս:

**Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որը չափվում է շարունակական հիմունքներով իրական արժեքով**

Հաշվի առնելով մի շարք ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթը՝ ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին: Որոշակի այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մասով իրական արժեքը որոշվում է բացահայտման և գնահատման նպատակներով, հիմնվելով հետևյալ մեթոդների վրա:

Կիրառելի լինելու դեպքում, իրական արժեքի որոշման համար օգտագործված տեղեկատվությունը բացահայտվում է տվյալ ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրություններում, սակայն ելնելով առկա անորոշություններից և սուբյեկտիվ դատողության օգտագործումից, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի ակտիվների անմիջապես վաճառքից կամ պարտավորությունների անմիջապես մարումից:

Ֆինանսական ակտիվներ/ պարտավորություն ներ	Իրական արժեքը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հազար դրամով		Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական մուտքային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի մուտքային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի մուտքային տվյալների հարաբերակցությունը իրական արժեքին
	Իրական արժեքի հիերարխիա	Մակարդակ 2			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ					
Փայեր ֆոնդերում		Մակարդակ 2	Համապատասխ	կ/չ	կ/չ

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

	224,628		ան ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը՝ ըստ ֆոնդերի կողմից հրապարակված տվյալների		
<b>Ֆինանսական ակտիվներ/ պարտավորություն ներ</b>	<b>Իրական արժեքը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հազար դրամով</b>	<b>Իրական արժեքի հիերարխիա</b>	<b>Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական մուտքային տվյալ(ներ)</b>	<b>Էական ոչ դիտարկելի մուտքային տվյալ(ներ)</b>	<b>Ոչ դիտարկելի մուտքային հարաբերակցությունը իրական արժեքին</b>
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ					
			Համապատասխան ան ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը՝ ըստ ֆոնդերի կողմից հրապարակված տվյալների		
Փայեր ֆոնդերում	222,683	Մակարդակ 2	տվյալների	կ/չ	կ/չ

Ղեկավարությունը հիմնվում է սեփական դատողությունների վրա ֆինանսական գործիքները դասակարգելիս՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Գնահատման մուտքային տվյալների նշանակությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական չափման համեմատությամբ: 2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղի չեն ունեցել փոփոխություններ մակարդակ 1-ից դեպի մակարդակ 2 կամ հակառակը:

**Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որը չի չափվում շարունակական հիմունքներով իրական արժեքով**

Ղեկավարության կարծիքով, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի մասով, որը չի չափվում շարունակական հիմունքներով իրական արժեքով (թեև պահանջում է իրական արժեքով բացահայտում), ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին: